է միշտ արևելյան ուղղությամբ։ Նրա և նախորդ ճյուղավորության մեջ կազմըված հովտով հոսում է Հաշունի (Զայզամի) գետակը, Բաղարչայի (այստեղ Բարգուշատ կոչվող) գետի աջակողմյան օժանդակը Շուռնուխի խիտ անտառների մոտով։ Նրա լանջերին դասավորված են Տանձավեր և Դավիթ Բեկ (Զեյվա) գյուղերը։

Շրջանի մյուս գյուղերը տեղավորված են Ողջիի գետահովտի երկու լանջերին, այն է՝ Քաջարանցը, Աթկըզը, Ողջին, Լեռնաձորը, Ջրախորը և այլն և մի 3—4 կմ Աճանանի գետաբերանից՝ շրջանի վարչական կենտրոն՝ Կապան հանքերը։ Մեղրու լեռնաբազուկի երկու ճյուղավորությունների և նրանց միջով վազող Բասուտ գետի հովտի լանջերին՝ Շիշկերտը, Կեմանցը (Գյումանդ 2-րդը կամ Թերիքնը կամ Ղաշլաղբենդը), Ծավը, Ն. Հանդը (Մեծ Հանդը), Սրաշենը, Շիկահողը։

Գյուղերի շուրջը՝ անտառները խամհատված են և վարելահողերի վերածված։ Դարերի ընթացքում վարելուց լանջերին գոյացել են տեռասներ, որոնց իրարից երբեմն բաժանում է նախկին անտառներից մնացած ծառերի և թփերի երկար ու նեղ գիծը։ Գյուղերն ամեն հարմարություն ունեն իրենց շենքերը ազատ դասավորելու։ Նույնիսկ լեռնային սեռերին հիմնված Վերին Վաչագան և Բեխ գյուղերն օգտվում են նման հարմարությունից։ Փայտի առատությունն ազդել է այստեղի ժողովրդական ճարտարապետական ձևավորման վրա։ Ամեն տեղ աչքի է զարնում փայտե պատշգամբների երկարությունն ու ընդարձակությունը։ Տները ցրված են հաճախ իրարից շատ հեռու ընդհանրապես փոքր թեքում ունեցող սարալանջերին։ Աղբյուրները բազմաթիվ են և դյուրին մատչելի։ Ինչպես Սիսիանում գետահովիտների ժայռոտ ու նեղ վերնամասերն են վտանգի ժամանակ բնակչության համար ապահով ապաստարան ծառայել, Կապանի շրջանում նույնպիսի ապաստարան են տվել հնում խիտ անտառները։

Բնորոշ է թրքական բնակավայրերի տեղաբաշխումը։ Թե՛ Սիսիանում և թե՛ Կապանում նրանք զետեղված են Բարգուշատի (Բերգուշետի) լեռնաբազուկների հովիտների վերնամասերում, որտեղից գարնան սկսվելուն պես հեշտ է բարձրանալ լեռնաբազուկի յայլաձեր և ուր նույնպես հեշտ է ուշ աշնանը սարից վերադառնալ։ Նույնպես լեռնային արոտատեղերի մերձավորությունն է, որ ազդել է Մեղրու (Մեղրի-Գյունեի) լեռների լանջերի ստորոտներին հաստատված թրքական գյուղերի դասավորության վրա։ Դրանցից մի քանիսը՝ Քիրս, Քուսուտ, Գեղի, այժմս էլ[3] կրում են ձմեռանոցների բնույթ, որոնք հարմարեցրած են տարվա մեջ մի կարճ ժամանակամիջոց բնակվելու համար— դեկտեմբերի սկզբներից մինչև մարտի սկզբները։ Սակայն ձմեռանոցի տիպի բնակավայրերի թիվը 1823 թ. հետո նշանավոր չափերով կրճատվել է։ Մի հարյուրամյակի ընթացքում նրանցից մի քանիսն, ամենաթույլերը, իրար հետ միացել են և այդպիսով խոշորացվել։ Մի մասն էլ հետզհետե բաժան-բաժան եղել և առանձին ընտանիքներով ցրվել ուրիշների մեջ։ Ավելի ամրացել են այն ձմեռանոցները, որոնք անցել են հողամշակության և իրենց բնույթով դարձել են նստակյաց տնտեսության մշտական բնակավայր։ Այս փոփոխությունների հետևանքով է, որ այժմյան Զանգեզուր գավառի բնակավայրերի ընդհանուր թիվը 1823 թ. հետ համեմատած փոքրացել է։ Կրճատումը տեղի է ունեցել ի հաշիվ ձմեռանոցների թվի։

---

[3] Այսինքն՝ 1942—1943 թթ. (ծան. խմբ.)։